

ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ա.

Անճառ լոյսին ծագումնն այսօր
Մեղի համար սիրայորդոր
Կը խոնարհի մէջ Վերնատան
Կատարել տօնն ըստուերական.
Ընթերեաց ատեն կապեց զենջակ
Այն որ հագած է լոյսն համակ,
Ու ծառայի պէս Զուր լրցած՝
Իրեննեւուն ոտներն լըւաց:

Բ.

Ձթողուց Պետրոս՝ որ իր ոտքին
Մօտեցնէ Հօր Բանն ու Ուրդին
Իր ձեռքն՝ որուն երկինք գործն էր
Ու երկրաւոր արարածներ,
Որ բացաւ աչքը կոյրերուն,
Խուլ ականջներն ու համր լեզուն,
Որ զինք ալեաց վրայ բըռնելով՝
Սաստեց ծովուն ու լուեց ծով:

Գ.

Փոքր հօտին գլուխն յանդիմանեց
Թէ չէր հասկնար խորհուրդն այն մեծ,
Ան ալ շընորձ խընդրեց հըլու
Գլուխն ու ոտները մաքրելու.
Ըսաւ, Չունի պէտք լըւացման
Գլուխդ, վասըն զի մաքուր է ան.
Ոտներդ լուացման կը կարօտին
Որ սըրբութեամբ գըլխուդ յօդին:

(Շարունակելի)

Դ.

Իր ուսուցած խոնարհութիւնն
Աշտկերտաց ամէն մէկուն
Այսօր գործով ցոյց տըւաւ Նա
Իր հրաշալի անձին վըրայ,
Ծառայ եղաւ հող էակին
Հուր էակէ անտես ոգին,
Սպասուորեց ծառաներուն
Սրովբէներէ պաշտուողն համբուն:

Ե.

Թէ ըլլալով ևս տէր եւ պետ
Ու ամէնուն ալ վարդապետ՝
Ինձ հետեւող ծառաներուդ
Լուացի ոտներն աղտէն տըղմուտ,
Դուք որ բնութեամբ էք համարժէք,
Նոյն հեղութիւնն ի յայտ բերէք
Որ բարձրացողն իյնայ յաւեր՝
Ինկած բնութիւնն ալ կանգնի վեր:

Ո.

Դու որ կոնքի մէջ ձեռքով ժիր
Անոնց ոտները մաքրեցիր,
Եւ ուսուցիր խոնարհութեամբ
Յաղթահարել չարն ապըստամբ,
Լուս՝ իմ մեղքն սիղմն ալ մըթին՝
Աղաչանքովն այդ սուրբ գունդին,
Ուղղէ քայլերս՝ որ ապահով
Ելլեմ երկինք խոնարհ հոգւով:

ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ